Հավանություն եմ տալիս՝ Կ.Սարգսյան

Հաստատում եմ՝ Ա.Համբարձումյան

31.08.2023թ.

Մ. Նալբանդյանի անվան Հ. 33 հիմնական դպրոցի VI-ա դասարանի ղեկավար Աշխատանքային տարեկան ծրագիր

2023-2024 ուստարի

ԿՐԹԱԿԱՆ -

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ

ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մեջ սեր արթնացնել ոչ միայն լոկ դեպի հայրենսիրությունը, այլ սովորեցնել՝ իրենք իրենց մեջ ձևավորեն այդ սերը:

Դիտեն առցանց հայրենաիրության ոգով լցված տեսանյութեր ու ֆիլմեր:

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ....

Դասարանում ստեղծել խաղաղ ու հանգիստ մթնոլորտ: Երեխաների մեջ դաստիարակել ու սերմանել հանդուրժողականություն, միմյանց հարգելու կարողություն, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Հաճախ անդրադառնալ ու խոսել քրիստոնեությունից, այցելել հոգևոր կենտրոններ/ եկեղեցիներ/:

Կազմակերպել քննարկումներ հոգևոր դաստիարակության խթանման համար:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ....

Երեխաների մոտ գեղագիտական ճաշակը զարգացնելու նպատակով, սովորեցնել գտնել ու տեսնել ԳԵՂԵՑԻԿԸ:Հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակերպել տարիքային կինոդիտումներ և այցելություն մշակութային այլ կենտրոններ:Կազմակերպել բաց քննարկումներ: Հաճախ այցելել թանգարաններ ու պատկերասրահներ, կազմակերպել ստեղծագործությունների քննարկումներ ասենք՝ հենց նկարիչների հետ
/Կարելի է իրականացնել նաև առցանց հարթակում /:

ՌԱԶՄԱ_ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...

Հաճախակի կազմակերպել զրույց- քննարկումներ հայրենասիրական թեմաներով:Կազմակերպել միջոցառումներ, բաց դասեր՝ նվիրված պատմական կերպարներին, Հայոց բանակի կազմավորմանը :Խոսել մերօրյա հերոսների մասին, կազմակերպել էքսկուրսիա պատմական վայրեր/ Եռաբլուր, Սարդարապատ…/:

Դիտել հայրենաիրության ու արիության ոգով տոգորված ֆիլմեր ու հաղորդաշարեր, կազմակերպել զրույց –քննարկումներ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...

Հետևել աշակերտների հիգիենային, շարժումներին, ճիշտ նստելու, գրատախտակից համապատասխան հեռավորությունից օգտվելու և նմանատիպ հարցերին: Դասերին ծանրաբեռնվածությունը թոթափելու, մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով կազմակերպել ֆիզիկական վարժություններ: Հետևել աշակերտների

մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին: Առցանց հարթակում անգամ կարելի է մի քանի րոպե ընդհատել դասը, հանձնարարել լիցքաթափող վարժանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ...

Աշակերտների մեջ դաստիարակել դասարանի և շրջապատի մաքրության նկատմամբ հետևողականություն/ խնամել ծաղիկները, վերանորոգել գույքը…/: Ձևավորել սեր դեպի աշխատանքը: Պետք է կարողանան գնահատել միմյաց կատարած աշխատանքը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ....

Աշակերտները պետք է հասկանան ու գիտակցեն բնության կարևորությունը, սիրեն և պահպանեն այն:Մաքուր պահեն շրջակա միջավայրը: Մեծ ցանկությամբ և ջանասիրաբար մասնակցեն շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես բնության մի մասնիկն եմ» թեմայով:

Պահանջել անհատական շփում բնության հետ, բնության գրկում:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ……

Ապահովել դպրոց-ընտանիք կապը՝ էլեկտրոնային օրագրի միջոցով: Կազմակերպել դասավանդող ուսուցիչների և ծնողների առցանց հանդիպումներ: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել ցածր առաջադիմություն, դժվար վարքագիծ ունեցող աշակերտների և նրանց ծնողների հետ հաճախակի հանդիպումներ կազմակերպելու վրա:

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ
1.	Գիտելիքի օր, դասագրքերի պահպանումը, անձնական հիգիենան	01.09	Դասղեկ սովորողներ	
2.	Կազմակերպչական հարցեր, դասարանի մաքրությունը	04.09 – 08.09	Դասղեկ սովորողներ	
3.	Փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ	11.09 – 15.09	Դասղեկ սովորողներ	
4.	Պետության դերն ու նշանակությունը մեր կյանքում, միջոցառում նվիրված անկախության օրվան	18.09 – 22.09	Դասղեկ սովորողներ	
5.	Ուսուցչի դերը սերնդի դաստիարակության գործում	25.09 – 29.09	Դասղեկ սովորողներ	
6.	Մեր ընտանիքը	02.10 – 06.10	Դասղեկ սովորողներ	
7.	Էրեբունի- Երևան հիմնադրման օրը	09.10 – 13.10	Դասղեկ սովորողներ	
8.	Այցելություն Թումանյանի տուն թանգարան	16.10 – 20.10	Դասղեկ սովորողներ	
9.	Հետևել աշակերտների մաքրությանը և հիգիենային: Դասագրքերի ստուգում	30.10– 03.11	Դասղեկ սովորողներ	
10.	Էքսկուրսիա աշնանային այգի	06.11 – 10.11	Դասղեկ սովորողներ	
11.	Կարևորել հարգանքը	13. 11 – 17.11	Դասղեկ	

	ընկերների նկատմամբ		սովորողներ	
12.	Քաղաքավարության կանոնները	20.11-24.11	Դասղեկ սովորողներ	
13.	Հետևել աշակերտների մաքրությանը	27.11 – 01.12	Դասղեկ սովորողներ	
14.	Բնական աղետները և դրանցից պաշտպանվելը	04.12 – 08.12	Դասղեկ սովորողներ	
15.	Նախապատրաստվել Ամանորին	11.12-15.12	Դասղեկ սովորողներ	
16.	Ձմեռային հեքիաթ	18.12-22.12	Դասղեկ սովորողներ	
17.	Ինչպես անցկացրեցինք Ամանորը և Սուրբ ծնունդը	09 .01 – 13.01	Դասղեկ սովորողներ	
18.	Դասասենյակի մաքրություն	16.01 – 20.01	Դասղեկ սովորողներ	
19.	Հայոց բանակը, նրա հաղթանակները, ինչպիսին պետք է լինի հայ զինվորը	23.01 – 26.01	Դասղեկ սովորողներ	
20.	Առողջության պահպանումը յուրաքանչյուր մարդու գործն է	30.01 – 03.02	Դասղեկ սովորողներ	
21.	Տեարն ընդառաջի տոնը և նրա ավանդույթները	15.02 – 20.02	Դասղեկ սովորողներ	
22.	Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, մայրենիի օր	06.02 – 10.02	Դասղեկ սովորողներ	
23.	Գիրք նվիրելու փոքրիկ միջոցառում գրատպարանի	13.02 – 17.02	Դասղեկ սովորողներ	

	թանգարանում			
24.	Գարնանամուտին նվիրված բացիկների պատրաստում	20.02 – 24.02	Դասղեկ սովորողներ	
25.	Թող ամենուր խաղաղություն լինի	27.02 – 03.03	Դասղեկ սովորողներ	
26.	Գարնան գույներ	06.03 – 10.03	Դասղեկ սովորողներ	
27.	Ինչպիսին պետք է լինի մարդը	13.03 – 17.03	Դասղեկ սովորողներ	
28.	Սուրբ Զատիկի խորհուրդը	27.03 – 31.03	Դասղեկ սովորողներ	
29.	Դասարանում միմյանց հարգելու և ընկերանալու կարևորությունը	03.04 – 07.04	Դասղեկ սովորողներ	
30	Հայոց ցեղասպանությունը,եղեռնի օրը	10.04 – 14.04	Դասղեկ սովորողներ	
31	Աշխատասիրության դրսևորման կարևորությունը մարդու կյանքում	17.04 – 21.04	Դասղեկ սովորողներ	
32	Մայիսյան հերոսամարտեր	24.04 – 28.04	Դասղեկ սովորողներ	
33	Հայրենական մեծ պատերազմ.Հաղթանակի օր	01.05 – 05.05	Դասղեկ սովորողներ	
34	Այցելություն Մայր Հայաստան ռազմարվեստի թանգարան	15.05 – 19.05	Դասղեկ սովորողներ	

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՆ

1.Մաքրել և վերակահավորել դասարանը:
2.Կազմել աշակերտների խմբերի ցուցակը:
3.Կազմակերպել դասագրքերի ստացման ժամանակացույցը
և բաշխումը աշակերտներին:
4.Կազմել դասասենյակը մաքրելու հերթապահության գրաֆիկ:
5.Աշակերտների հետ համատեղ ընտրել տարվա ընթացքում քննարկվելիք թեման և դասղեկի ժամերին անցկացվելիք զրույցների թեմատիկան:
6.Ուսումնասիրել աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները, պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը:
7.Հավաքել սպառիչ տեղեկություններ լրացուցիչ կրթության հաստատություններում, խմբակներում աշակերտների մասնակցության մասին:
8.Աշակերտների ազատ ժամանակը ճիշտ կազմակերպելու նպատակով տանել բացատրական աշխատանք:
9.Ընտրել ծնողկոմիտեի անդամներ և նախագահ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1.Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:
2.Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
3.Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
4.Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին:
5. Հետևել դասասենյակի մաքրությանը՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:
6.Ստուգել դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:
7.Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին <u>չբղավեն, չվազեն և չհրմշտեն</u> իրար:
8.Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:
- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշումներ կայացնել:
- Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտների և նրանց ծնողների հետ:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
- Լսել դասարանի ավագի հաշվետվությունը:

- Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին՝ բարձրացնելու առաջադիմությունը:
  - Հանդիպել ներառական կրթության մեջ ներգրավված աշակերտների ծնողների և հատուկ մանկավարժների հետ:

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պահել ծնող- ուսուցիչ կապը:

- Հետևել դասագրքերի պահպանմանը:
- Կազմակերպել երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:
- Անցկացնել առցանց ծնողական ժողովներ և պլանավորված զրույցներ:
- Հետևողական աշխատանք տանել ուսման առաջադիմության բարձրացման նպատակով:

- Անցկացնել դաստիարակչական առցանց թեստեր և կազմակերպել առցանց բանավեճեր աշակերտներին հուզող թեմաներով:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կիսամյակի ամփոփում:
- Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:

Ծնողական ժողով:

Տարեկան հաշվետվության հանձնում

Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:

Դասասենյակի մաքրում և հանձնում:

Երեխաների ծնողներից տեղեկություններ հավաքել նրանց ամառային հանգստի կազմակերպման մասին:

Ծնողների և դասարանի հետ համատեղ կազմակերպել դասարանի ամառային էքսկուրսիա՝ ըստ իրավիճակի:

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հ/հ	Կատարման ժամկետ	Թեմա	Կատարող անձ	Նշումներ
1	05.09.22թ.	Գիտելիքի դերը մարդու կյանքում	*Դասղեկ*	
2	12.09.22թ	Բարեկամությունն սկսվում է ժպիտից	*Դասղեկ* *Աշակերտներ*	
3	19.09.22թ	Հայաստանը մեր աչքերով	*Դասղեկ* *Աշակերտներ*	
4	26.09.22թ	Համացանցի վտանգները և առավելությունները:	Դասղեկ Աշակերտներ	
5	03.10.22թ	«Ժամանակի ճիշտ կառավարում»	Դասղեկ Աշակերտներ	
6	10.10.22թ	/հանդուրժողականություն/	Դասղեկ Աշակերտներ	
7	17.10.22թ	/հանդուրժողականություն/	Դասղեկ Աշակերտներ	
8	31.10.22թ	«Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը»	Դասղեկ Աշակերտներ	
9	07.11.22թ	Ինչի՞ է պատրաստ մարդը հանուն իր հայրենիքի /44-օրյա պատերազմ/	Դասղեկ Աշակերտներ	
10	14.11.22թ	/հանդուրժողականություն/	Դասղեկ Աշակերտներ	
11	21.11.22թ	/հանդուրժողականություն/	*Դասղեկ, աշակերտ*	
12	28.11.22թ	/հանդուրժողականություն/	*Դասղեկ, աշակերտ*	
13	05.12.22թ	Երկրաշարժի ժամանակ երեխաների պաշտպանությունն ու տարհանումը	Ա. Ասոյան Աշակերտներ	

14	12.12.22թ	Իմ իրավունքները	Դասղեկ Աշակերտներ	
15	19.12.22թ	Հանդուրժողականություն	Դասղեկ Աշակերտներ	

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

Հ/հ	Կատարման ժամկետ	Թեմա	Կատարող անձ	Նշումներ
1.	09.01.23թ.	/հանդուրժողականություն/	Դասղեկ Աշակերտներ	
2.	16.01.23թ	/հանդուրժողականություն/	*Դասղեկ, աշակերտ*	
3.	23.01.23թ	Կրթության դերը մեր կյանքում	*Դասղեկ, աշակերտ*	
4.	30.01.23թ	Հայոց բանակը, նրա հաղթանակները, ինչպիսին պետք է լինի հայ զինվորը	Դասղեկ Աշակերտներ	
5.	06.02.23թ	«Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով»	Դասղեկ, աշակերտներ	
6.	13.02.23թ	Հովհհաննես Թումանյան Գիրք նվիրելու արվեստը	*Դասղեկ, աշակերտ.*	
7.	20.02.23թ	*Անաղարտ պահենք մեր մայրենին*	*Դասղեկ աշակերտ*	
8.	27.02.23թ	Գարունը զարթոնք է բերում	*Աշակերտներ*	

9.	06.03.23թ	Մայր իմ անուշ ու անգին	Դասղեկ Աշակերտներ	
10.	13.03.23թ	Հրդեհի ժամանակ երեխաների պաշտպանությունն ու տարհանումը	Դասղեկ Ա. Ասոյան	
11.	20.03.23թ	Հայ գրականության մեծերը. Պոեզիայի օր	*Դասղեկ, աշակերտ*	
12.	03.04.23թ	*Ազգ, հայրենիք* */Ապրիլյան պատերազմ/*	Դասղեկ Աշակերտներ	
13.	10.04.23թ	Հայկական ծեսեր և ծիսակատարություններ:	*Դասղեկ,աշակերտ*	
14.	17.04.23թ	Շրջակա միջավայրի պահպանություն	Դասղեկ, աշակերտ	
15.	08.05.23թ	Մայիսյան հերոսամարտեր	Դասղեկ Աշակերտներ	
16.	15.05.23թ	Իմ ընտանիքը	*Դասղեկ, աշակերտ.*	
17.	22.05.23թ	«Ի՞նչ եմ տանում այս տարի ինձ հետ դպրոցից» թեմայով քննարկում	*Դասղեկ, աշակերտ.*	